

հանդարտ գլխով կը խորհէր թէ ինքն է Աստուծոյ ընտրեալը, սրբազան թօրայի պահպանը եւ իրեն է ապագան: Այդ ամէն հալածանքները նա կը նկատէր իր փորձութիւններ իր համբերութեան եւ Յոր Երանելի օրինակը միշտ աչքի առջեւ ունենալով կը փառաբանէր Եհովան, մէկ օրէն միւսը Մեսիայի գալստեան ակնկալութեամբ:

Այս ազատական հոսանքը ծնունդ առած է ժԳ. դարուն եւ մինչեւ այսօր կը շարունակուի տակաւին առանց վերջնական յաղթութեան: Երկու հատուածներու վէճերն յաճախ անցած են կէթթօի սահմանները եւ, թէեւ ազատական հատուածն երթալով ստուարացած է դարերու ընթացքին մէջ, բայց Վերածնութիւնն ու Լուսերականութիւնն են որ կրցած են աւելի զօրացնել զայն արեւմուտքի մէջ: Արեւելքը ցայժմ կը մնայ փարած իր Թալմուտին, կամովին անհաղորդ մնալով յառաջդիմական սեւէ քայլի:

ԺԳ. դարէն մինչեւ ժԵ. դարը հրէաներու համար ամենադառն ժամանակներ են: Հաւատաքննական խարոյկներ, հաւաքական տարագրութիւն եւ արտաքսում, կոտորած եւ կողոպուտ սովորական դէպքեր էին անոնց համար: Այդ հալածանքներու մասին աւելի որոշ գաղտնար ունենալու համար կ'արժէ կարդալ Գրէցի հոյակապ հրէից պատմութիւնը:

Պահակիւրներն Եւրոպայէ մեկնելէ առաջ իրենց ուժը հրէաներուն վրայ կը փորձէին նախապէս: Երբ ժանտախտի համաճարակը կը ծագէր Եւրոպայի մէջ, հրէաներն իրր պատճառ, ողջակէզ կը մատուցուին բարկացոտ Աստուծոն: Բոհեմիոյ, Մորաւիայի եւ Լեհաստանի մէջ անպատիժ կերպով կարելի էր ըստ պաննէ: սեւէ հրէայ՝ ամենազոյգն պատճառի մը համար: Սթրազուրկի եւ Մայանսի մէջ հարիւրաւորներ, իսկ Սպանիոյ մէջ հազարաւորներ ողջ ողջ կ'այրուին խարոյկներու վերայ, մինչեւ իսկ ջրխտոնէութիւն ընդունելնէն վերջ: Եւ այս ամէնին կը հանդուրժէր հրէան թօրայի սիրուն. միայն մոլեռանդութիւնն է որ կրնայ նահատակներ յարուցանել. փիլիսոսփայութիւնն անկարող է մարտիրոսացնել անհատը:

ՄԱՅՄՕՆԻՏ

Առաջին անգամ Թալմուտի անհամար պատուիրաններուն փիլիսոսփայական ու պատմական բացատրութիւններ տալու փորձն ըրաւ Մովսէս Մայթօնիտ անունով սպանիածին հրէայ մը, ժԲ դարու մէջ, երբ տակաւին ամբողջ Պիւրենեան թերակղզին կը գտնուէր Մաւրիտանացաց տիրապետութեան տակ:

Արարական քաղաքակրթութիւնն իր գաղտնակէտին հասած էր եւ հրէայ գաղութն իր խոշոր բաժինն ունէր անոր մէջ: Մայթօնիտ փորձեց Թալմուտի պարունակած հակասական գաղափարներու եւ աւանդութեանց քասին մէջ կարգ մը հաստատել եւ ստիպուեցաւ մերժել մաս մը արտառոցութիւններ, բարեփոխել ուրիշներ եւն., եւ մեթոտիկ ու տրամաբանական կերպով շարայարուած ու բացատրուած նոր եւ յստակ Թալմուտ մը մէջտեղ բերել:

Առաջին անգամն էր որ Արիստոտէլի յունական փիլիսոսփայութիւնն ու յուդայական միսթիքականութիւնը կը հաշտեցուէին իրարու հետ: Մեծ աղմուկ Իսրայէլի մէջ. թէեւ անհաւասար, բայց երկու բանակներու բաժնը եցաւ ազգը. մէկ կողմէն՝ փոքրաթիւ մայթօնիտականները, որոնց յէնքն էր ազատամտութիւնն եւ տրամաբանութիւնը, միւս կողմէն՝ մոլեռանդ եւ տէ՛տ ժողովուրդն եւ բարբիները որ աւանդութեանց անեղծ պահպանման մէջ միայն կը տեսնէին հրէայ ցեղի տեւաշնութիւնը՝ օտար երկինքներու տակ՝ մինչեւ Մեսիայի գալուստը:

Մայթօնիտ հրաշքներ կը մեկնէր բնական պատահարներով, մարդարկութիւնները կը նկատէր ոչ թէ իրր երկնային ներշնչումներ, այլ իրր փորձուրդ, երազ եւ երեւակայութիւն: Նա կը մերժէր արքայութիւնը, դժոխքը եւ մարմիններուն յարութիւնը: Այս ամէնը նորութիւններ էին երեսուն դարերէ յետէ արմատացած ու նուիրագործուած սովորութեանց եւ գաղափարներու հանդէպ եւ Մայթօնիտ շէր յուսար անշուշտ ամբողջ ազգը միահամուռ եւ առանց դժուարութեան իրեն դարձնել: Նա մեռաւ բանադրանքներու եւ անէճքներու տակ կ'ըսէ:

Պայքարն աւելի կատաղի դոյն ստացաւ